ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1048-Ա « 20 » մարտի 2024թ.

ԵՐԵՎԱՆ, ՇԵՆԳԱՎԻԹ, Ղ.ՄԱԴՈՅԱՆ ՓՈՂՈՑ Հ.1/1 ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԼԱԴԻՄԻՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԱՎԱԳԻՄՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Վլադիմիր Հարությունի Ավագիմյանի (ծնված 20.09.1956թ.) դիմումը:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, ՀՀ կադաստրի կոմիտեի 05.05.2023թ. հ.ԱՏ-05052023-01-1064, «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 05.06.2023թ. հ.7877 գրությունը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 01.06.2023թ. հ.20-Ել-Դ-44747-23 եզրակացությունը, համաձայն որի Երևան, Շենգավիթ, Ղ.Մադոյան փողոց հ.1/1 հասցեում բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1, 2, 3 կետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 1-ին հոդվածով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Երևան, Շենգավիթ, Ղ.Մադոյան փողոց հ.1/1 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Վլադիմիր Հարությունի Ավագիմյանի սեփականության իրավունքը բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ 155.39քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 155.39քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:

2.Երևան, Շենգավիթ, Ղ.Մադոյան փողոց հ.1 հասցեի բնակելի տանը տրամադրել «Շենգավիթ, Ղ.Մադոյան փողոց, հ.1/1 տուն» հասցեն:

3.Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետի կողմից հաստատված հատակագծով:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

6. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա.Փամբուխչյանի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ